

աշակերտաց, Հիւանդապահ եւն., Նոյն իսկ եղած են առիթներ — թէեւ հազուադէպ — յորս Միս. վարչութիւնը ամբողջապէս Աշխ. Եղբոր մը վստահացած է Մատակարարութիւնը կամ Տնտեսութիւնը՝ պաշտօնական ընտրութեամբ՝ թէ՛ Մուրատեան և թէ՛ Ռափայէլեան կամ Մ. Ռ. վարժարաններուն մէջ։ Յիշենք անոնցմէ՝ զոր օր. Եղ. Ստեփանոս Ուսումեանը. Եղ. Օգոստինոս Ծիանի և Եղ. Ալեքսիանոս Գազէզեան։

Զէ կարելի լուծեամբ անցնիլ մասնաւորապէս Եղ. Ստեփ. Ուսումեանի նկատմամբ, որ յետ երկար տարիներ (1840-1856) ի փատուա և ի փարիզ Մուրատեան վարժարանին մէջ ծառայելու՝ կը զրկուի Պոլիս, ուր գրեթէ նոյնքան տարիներ կը պաշտօնավարէ։

Իրեն կը յանձնուի՝ հոն Մուրատեան և Ռափայէլեան վարժարաններու եկամուտներն և աշակերտաց թոշակները իրենց ատենին զանձելու ծանրատաղտուկ պաշտօնը, զոր անձնանուէր փոյթով կը վարէ՝ ինչպէս Աբրահօր հետ ունեցած իր անպաճոյճ բազմաթիւ նամակները կը վկայեն։ Պէտք է ոսկեառու քանդակուն անոր խղճամիտ գործունէութեան մասին իրեն ուղղուած հետեւեալ վաւերական գնահատանքը. «Վարժարանաց Տեսուչները կրօնատագետ և մանաւանդ Քոստանիցի, և մեղադրութիւն առնելէ չեմ յսած, այլ մանաւանդ գոհութիւն»։ զայս կը գրէ իրեն Հիւսիւզեան Աբրահայր. (Նմկ. 1865 Ապրիլ 14)։

Ատիկէ երկու տարի առաջ ալ արդէն՝ նոյն հայրական քաջալերող գրիչը՝ զինքը հասարակամիտութեան մէջ բարենախանձ մրցակից ներկայացուցած էր նոյն ժամանակի ուրիշ վաստակաւոր Եղբոր մը, որ էր Եղ. Անտոն Քաջունի (եղբայրը Հ. Մանուէլ Քաջունոյ), արդիւնաւոր՝ Ուսումի եկամուտի աղբիւրներ ստեղծելուն մէջ։ Ասոր մասին Հիւսիւզեան Աբրահայր կը տեղեկագրէ. «Ի մատակարարել ջուր յարբուցումն կենդանեաց՝ որ դժուարին է յոյժ՝ մանաւանդ ի ձմեռան, խնդրեաց բանալ ջրհոր արդիւնեան ի վանս՝ մատակարարելով զծախսն ի շահուց Լիտոյի, և յանցելունն եօթնեկի եկին գործաւորը և սկսան ծակել զգետին»։ (գր. առ Հ. Դանիէլ Պօլսեան, 1863 Նոյ. 12)։ Իսկ ինքը՝ Եղ. Ստեփանոս՝ միաժամանակ Պոլսէն կը նպաստէ իր վանքին՝ կազով լուսաւորելու միջոցներն հայթայթելով։ Յետ ամէն ինչ յաջողութեամբ պսակուելու՝ ինքն իսկ Աբրահայրն է որ կը փութայ գրել առ Եղ. Ստեփանոս, աւետելով անոր՝ թէ «շարաթ իրիկուն կազը սկսաւ լուսաւորել Գոլոր վանքը բաց ի սենեակներէն, բայց շատ աղուոր եղաւ և ազդեցութիւն բրաւ՝ մանաւանդ սեղանատունը. և ամէնքը օրհնեցին զքեզ. նմանապէս հետեւեալ իրիկունը տպարանցիք որ ազատեցան իրենց այն գարշելի կանթեղներէն»։ (գր. 1863 Դեկտ. 25)։ Այլուր կը յաւելու նաեւ. «Կազին չյաջողելու բան մը կար նէ՝ ծախքն էր. երբոր դու անոր դիմացար, ամէն բան դիւրացաւ, ու եղաւ, և երեկ չէ առաջի օրը ստակն ալ տուաւ Եղ. Անտոնը. շէն կենաս, և Աստուած օրհնէ քեզ ալ՝ քսակը ալ, ինչպէս որ Աբրահամ Նահապետը օրհներ է նէ։ Իսկ ջրին յաջողութիւնը հարկաւ կը գրէ քեզի Եղ. Անտոնը. խել մը խաղցընելէն ետեւ զմեզ ալ՝ աշխատաւորներն ալ՝ անցած շարաթ օրը 72 մէլրոյ խորութենէն ջուր մը բղխեց որ օրը 250 մազթէլի չափ կը վազէ առտուրնէ մինչեւ իրիկուն՝ իրիկունէ մինչեւ առաւօտ. ալ Եղ. Անտոնին ուրախութիւնը ո՞վ կրնայ բացատրել. և իրաւ աղուոր բան է. երկրթէ խողովակը գետնէն, այսինքն մեր պարտիզի յատակէն կէս կանգունի չափ բարձր է, չորս կողմէն եօթը ծակ բացեր են, անոնցմէ շատրուանի կամ մուսլուխի պէս կը վազէ, և ջուրն ալ անուշ, որ աւազէ անցնի նէ շատ աղէկ կը խմուի ալ։ Ալ ամառը տաք ու երաշտը ըլլայ՝ անոր սեփակ պիտոր հաններ, պարտէզը պօլ պօլ թող ջրեն՝ հատնելիք չունի որ։ Այսպէս Աստուած երկուքնուդ բանն ալ յաջողեց. մէկերնիդ ամառը, մէկաւնիդ ձմեռը վանքը բոլոր պիտոր ուրախացնէք»։ (գր. 1864 Յունուար 15)։